



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍԻՍԱԿԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵԼ» ՄԱՏՐԱՆ
ԱՆՈՒԱՆԱԿՈՂՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՎՈԹԻ ՄԱՏՈՒՑՈՒԿԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԳԱՉԱՆԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ

Ս. ՏՐԴԱՏԻ ԵՒ Ս. ԱՇԽԵԼԻ ՆՄԱՆ ՔԱԲԱՏԱՐԻՄ ՄՆԱՆՔ ՄԵՐ ԱՉԳԱՅԻՆ ՄՐԲՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՅՈՑ Ս. ՄԻՒՈՒՆԻՆ

- **ՏԻԿԻՆ ԱՇԽԵԼ ՓԻԼԱՒԹԵԱՆ 25,000 ՏՈԼԱՐ ՆՈՒԻՐԵՑ ԱՉԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ**

Հայաստան Աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորն ու թագուհին, Ս. Տրդատ եւ Ս. Աշխել, իրենց վարքով ու բարեսիրական գործերով մինչեւ այսօր ալ օրինակելի կը մնան մեզի համար, կը հանդիսանան հայ քրիստոնեայ ընտանիքներու ուղեցոյցը, եւ իրենց ցուցաբերած քրիստոնեական անյաղթ հաւատքով ու ծառայութեամբ կը դառնան ապրող պատգամ բոլոր հայ ընտանիքներուն համար, յայտարարեց թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ս. Տրդատ եւ Ս. Աշխել տօնին առիթով իր փոխանցած պատգամին ընթացքին:

Հայաստանի արքայական առաջին քրիստոնեայ ընտանիքին տօնը նշուեցաւ Ծաբաթ, 14 Յունիսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի մատրան մէջ, որ միաժամանակ՝ մատրան անուանակոչութեան տօնն է: Ս. Պատարագ մատուցեց Արք. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան, իսկ արարողութեան հանդիսապետեց եւ օրուան պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազն Հայրը: Ս. Պատարագին ներկայ էին Հոգեւորականաց Դասու անդամներ, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Տիար Խաժակ Տիգիճեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Կարօ Յակոբեան, Ազգային Վարչութեան ու Ժողովականութեան ներկայացուցիչներ, մատրան բարերարուիի Տիկին Աշխել Փիլաւճեան, Առաջնորդարանի գլխաւոր բարերարներ՝ Տէր եւ Տիկին Ժան եւ Աստղիկ Պետրոսեան, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, ինչպէս նաեւ բազմաթիւ հաւատացեալներ:

Ս. Պատարագի արարողութիւնը սփռուեցաւ Ազգ. Առաջնորդարանի սրահին մէջ հաստատուած պաստառին վրայ, համապատասխան

բացատրութիւն տրուելով ներկաներուն Գերա. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեանի կողմէ:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Թեմիս Երիտասարդական խմբակներու անդամ-անդամուհիներէ բաղկացած միացեալ նորակազմ Երգչախումբը, ղեկավարութեամբ Յոզշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, Երգեհոնի ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազնան ու հոգեւորականաց դասը ուղղուեցան սրահ, ուր տեղի ունեցաւ մատաղօրինեք, ինչպէս նաեւ հոգեհանգիստ, վասն հոգլոց բարերարացն Առաջնորդարանիս:

Իր քարոզին սկզբնաւորութեան, Առաջնորդ Սրբազնանը ողջունեց ներկայութիւնը յարգելի հիւրերուն ու հաւատացեալներու բազմութեան: Ան յայտնեց, որ անցեալ տարի իր նոյն առիթով տուած քարոզին մէջ խոստացեր էր այս տարուան համար մատաղօրինեք կատարել, ուստի այս առիթով բարձր գնահատեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Միութեան անդամուհիները, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին իրականացնելու խոստումը:

Սրբազնան Յայրը այսուհետեւ անդրադարձաւ տօնին պատմական հիմքերուն՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի ու Տրդատ թագաւորին միշեւ սկզբնական թշնամանքին, հաւատոյ հօր կրած տառապանքներուն, ապա նաեւ՝ թագաւորին քրիստոնեութեան դարձին ու Յայաստանին ու Յայ ժողովուրդին թագաւորական ընտանիքին մատուցած ծառայութիւններուն ու բարեսիրութեանց: Յանգամանօրէն անդրադարձաւ շաբաթ մը առաջ, Շաբաթ Յունիսի 7-ի երեկոյեան, Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի շրջափակին մէջ տեղի ունեցած Սրբալոյս Միւռոնի օրինութեան, ձեռամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետին: Խօսեցաւ Ս. Միւռոնի կարեւորութեան ու անհրաժեշտութեան մասին Յայ մարդու կեանքըն ներս: Վերջաւորութեան կոչ ուղղելով. «Ս. Տրդատի եւ Ս. Աշխենի նման հաւատարիմ մնանք մեր ազգային սրբութիւններուն եւ Յայց Ս. Միւռոնին»:

Սրբազնան Յայրը ուրախութեամբ յայտնեց, որ մատրանս բարերարուիին՝ Տիկին Աշխեն Փիլաւան, գնահատելով օրուան մթնոլորտը, տօնական այս առիթով, իր կատարած իշխանական նուիրատուութեանց շարքին, Ազգային Առաջնորդարանիս կը կատարէ 25,000 տոլարի նոր նուիրատուութիւն մը: Նշենք, որ այս տօնը առիթ եղաւ նաեւ շնորհաւորելու ազնիւ բարերարուիին, որուն անուանակոչութիւնն տօնն էր:

Արարողութեան աւարտին, հոգեւորականաց դասը երգեց օրուան տօնին յատուկ շարականը, «Ով Երանելիի», ապա ներկաները միաբերան Երգեցին «Կիլիկիա» մաղթերգը եւ «Մեր Յայրենիք»ը: Առաջնորդ Սրբազնան Յօր պահպանիչով վերջ գտաւ օրուան հոգեպարար արարողութիւնը:

Ապա, Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Օժանդակ Սարմսի անդամները ներկաներուն բաշխեցին օրինուած մատաղը:

DURING DIVINE LITURGY CELEBRATING THE NAME DAY OF THE PRELACY
“ST. DERTAD AND ST. ASHKHEN” CHAPEL

**LET US REMAIN FAITHFUL TO OUR NATIONAL TREASURES AND
OUR HOLY MURON**

STATED THE PRELATE

- MRS. ASHKHEN PILAVJIAN DONATES \$25,000 TO THE PRELACY ON THIS OCCASION

On the evening of Saturday, June 14th, the Feast of St. Dertad and St. Ashkhen, the first Christian Armenian family, and the name day of the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel were celebrated with Divine Liturgy and the blessing of madagh. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy, which was celebrated by Rev. Fr. Ardag Demirjian, and delivered the sermon.

Among those in attendance were clergy members, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Executive Council members, Chapel benefactress Mrs. Ashkhen Pilavjian, and Prelacy Grand Benefactors Mr. and Mrs. John and Asdghig Bedrosian.

The service was also broadcasted on a screen in the hall where Very Rev. Fr. Muron Aznikian offered explanations to the parishioners. Members of the newly established Prelacy youth choir participated in the singing of the Liturgy led by Very Rev. Fr. Barthev Gulumian and accompanied by Prov. Levon Abrahamyan on the organ.

At the conclusion of the service the Prelate and clergy members headed in a procession to the hall to conduct the blessing of madagh as well as requiem for the deceased benefactors of the Prelacy.

The Prelate began his sermon by commending the faithful parishioners for their participation. He continued by speaking about the origins of the feast, from the enmity between St. Gregory the Illuminator and King Dertad, to the persecution of St. Gregory, and the eventual conversion of King Dertad to Christianity and the subsequent goodwill of the royal family towards Armenia and the Armenian people. The Prelate also remarked on the blessing of Holy Muron, which had taken place a week earlier by H.H. Catholicos Aram I, speaking of the significance of Holy Muron in the lives of each Armenian and calling on all those present to remain faithful to our national treasures and to our Holy Muron.

The Prelate then joyfully announced that Chapel benefactress Mrs. Ashkhen Pilavjian had made a new pledge of \$25,000 to the Prelacy, following which the Prelate congratulated her on what was also her name day.

The Prelate then blessed the madagh, which was followed by the singing of a hymn dedicated to the feast by clergy members. Clergy and guests then joined together in the singing of “Gligia” and the Armenian national anthem.

The service concluded with the Prelate's benediction, after which members of the Ladies Auxiliary offered the blessed madagh to the faithful.